ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВОНСКИЙ) ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

«04» հունիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոն

Հեղինակ՝ ի.գ.թ., դասախոս Թորոսյան Ս.Լ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սահմանադրական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

« Սահմանադրական իրավունքն առանցքային իրավունքի ճյուղերից է: Սահմանադրական իրավունքի կարգավորման առարկա հանդիսացող հասարակական հարաբերությունների կարևորությունն ինքնին կանխորոշում են այս իրավունքի ճյուղի տեղը և դերը իրավագիտությունում: Սահմանադրական իրավունք ուսումնական առարկայի շրջանակներում ուսանողները հնարավորություն են ունենում գիտելիքներ ստանալ պետության կենսագործունեության հիմքում դրված հիմնարար սկզբունքների, պետական կառավարման համակարգի, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին: Ըստ այդմ՝ այս իրավունքի ճյուղի մասին գիտելիքներն անհրաժեշտ են ցանկացած իրավաբանի համար՝ անկախ մասնագիտական կողմնորոշումից: Դա է պատճառը, որ Սահմանադրական իրավունք ուսումնական առարկան դասավանդվում է գրեթե բոլոր բուհերի իրավագիտության ֆակուլտետներում և հանդիսանում է ընդհանուր ուսումնական ծրագրի պարտադիր բաղադրիչներից մեկը:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գիտելիքներ Սահմանադրական իրավունք ուսումնական առարկայի բովանդակության վերաբերյալ:

Դասընթացի հիմնական խնդիրն է ուսանողներին ներկայացնել Սահմանադրական իրավունքի տեսական դրույթները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և Սահմանադրական իրավունքի աղբյուր հանդիսացող այլ իրավական ակտերի բովանդակությունը:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խդիրները.

Դասընթացի օբյեկտը և առարկան:

«Հարկային իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է հարկային օրենսդրությունը և հարկային իրավահարաբերությունը կարգավորող այլ իրավունքի աղբյուրները:

«Հարկային իրավունք» դասընթացի առարկան՝ հարկային իրավունքի սուբյեկների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են, մասնավորապես, գործնականում հարկային օրենսդրության դրույթների կիրառումը, ինչպես նաև հարկային մարմնի կողմից իրականացվող գործունեությունը:

Դասընթացի մուտքային պահանջները:

«Սահմանադրական իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի

տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

- Որոշել սահմանադրական իրավունքի բնագավառում իրավական խնդիրների էությունը.
- Կողմնորոշվել սահմանադրական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում.
- Ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի վրա.

կարողանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն:

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան.
- Վերլուծել սահմանադրական իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կատարել սահամանդրական իրավունքի տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն.
- Կարողանալ աշխատել սահմանադրական իրավունքի բնագավառում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները:

«Սահմանադրական իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի

կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Սահմանադրական իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Սահմանադրական իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 12 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**20**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**12**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**120**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Բաժին 1. Սահմանադրական իրավունքի և Սահմանադրության ընդհանուր նկարագիրը	**3**	1	2
Թեմա 1.1. Սահմանադրական իրավունքը	**2**	1	1
Թեմա 1.2. Սահմանադրությունը	**2**	1	1
Բաժին 2. Սահմանադրական կարգի հիմունքները	**2**	1	1
Թեմա 2.1. Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և ընդհանուր նկարագիրը	**2**	1	1
Թեմա 2.2. Սահմանադրական կարգի հիմունքների բովանդակությունը	**3**	1	2
Բաժին 3. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները	**3**	1	2
Թեմա 3.1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը և դասակարգումը	**3**	**1**	2
Ընդամենը	**20**	**8**	**12**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

Բաժին 1. Սահմանադրական իրավունքի և Սահմանադրության ընդհանուր նկարագիրը

Թեմա 1.1. Սահմանադրական իրավունքը

Այս թեմայի շրջանակներում կուսումնասիրվի սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդը, սահմանադրական իրավունքի նորմերը, ինստիտուտները, աղբյուրները, սահմանադրաիրավական հարաբերությունները:

Թեմա 1.2. Սահմանադրությունը

Այս թեման ներառում է ինչպես սահմանադրության հասկացությունը, այդպես էլ էությունը, իրավաբանական բնույթը, տեսակները, ձևերը, գործառնությունները, գործողությունը:

Բաժին 2. Սահմանադրական կարգի հիմունքները

Թեմա 2.1. Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և ընդհանուր նկարագիրը

Սույն դասընթացի շրջանակներում կներկայացվեն սահմանադրական կարգի հասկացությունը, սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը, տալիս ենք դրա ընդհանուր նկարագիրը, և ներկայացնում առանձնահատկությունները:

Թեմա 2.2. Սահմանադրական կարգի հիմունքների բովանդակությունը

Ուսումնասիրելով Սահմանադրական կարգի հիմունքների բովանդակությունը անդրադարձ կարվի սահմանադրական կարգի հիմունքներ գլխում տեղ գտած դրույթներին, դրանց նկարագրին, իմաստին ու էությանը:

Բաժին 3. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները

Թեմա 3.1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների հասկացությունը, ընդհանուր նկարագիրը և դասակարգումը

Վերոնշյալ թեման ընդգրկում է ինչպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները ու ազատությունները, այդպես էլ դրանց հասկացությունը, սահմանադրաիրավական ամրագրման նշանակությունը, դասակարգումը և տեսկաները տեսակները:

4. Գրականության ցանկ

Հիմնական գրականություն՝

1. Ս. Լ. Թորոսյան, ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանություններով, Առաջին մաս, Երևան, 2023թ.:

Լրացուցիչ գրականություն՝

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք առաջին | Դասագիրք բուհերի համար, «Տիգրան մեծ» հրատ., գլխ. խմբագիր՝ իրավ. գիտ., դոկ., պրոֆ., Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք երկրորդ | Դասագիրք բուհերի համար, «Տիգրան մեծ» հրատ., պատ. Խմբագիր՝ իրավ. գիտ., դոկ., պրոֆ., Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, 2010
4. Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրությունը, համառոտ պարազաբանումներ, 2016:

Նորմատիվ իրավական ակտեր՝

1. ՀՀ Սահմանադրություն (1995, 2005 և 2015 թվականների խմբագրություններով)
2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք
3. «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք
4. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք
5. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենք
6. «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենք
7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենք
8. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենք

Էլեկտրոնային ռեսուրս՝

1. https://www.arlis.am/
2. http://www.eaeunion.org/
3. https://www.zakonrf.info
4. https://www.petekamutner.am
5. https://www.nalog.gov.ru

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Սահմանադրական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը
2. Սահմանադրական իրավունքի նորմերը և ինստիտուտները
3. Սահմանադրահիրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները
4. Սահմանադրական իրավունքի աղբյուրները

5. Սահմանադրության հասկացությունը

6. Սահմանադրության իրավաբանական բնույթը

7. Սահմանադրության էությունը

8. Սահմանադրության տեսակները

9. Սահմանադրության ձևերը

10. Սահմանադրության գործառնությունները

11. Սահմանադրության գործողությունը

12. Սահմանադրության նախաբանը

13. Սահմանադրական կարգի հիմունքները

14. Պետության բնութագրիչները

15. Իշխանության պատկանելը ժողովրդին

16. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

17. Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը

18. Իրավական նորմերի աստիճանակարգությունը

19. Օրինականության սկզբունքը

20. Ընտրական իրավունքի սկզբունքները

21. Գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը

22. Տեղական ինքնակառավարման երաշխավորումը

23. Սեփականության երաշխավորումը

24. Տնտեսական կարգը

25. Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը

26. Արտաքին քաղաքականությունը

27. Զինված ուժերը և պաշտպանությունը

28. Մշակույթի, կրթության, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը

29. Ընտանիքի պաշտպանությունը

30. Պետությունը և կրոնական կազմակերպությունները

31. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին

32. Հայկական սփյուռքի հետ կապերը

33. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, խորհրդանիշերը, մայրաքաղաքը

34. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները

35. Մարդու արժանապատվությունը

36. Կյանքի իրավունքը

37. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը

38. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը

39. Անձնական ազատությունը

40. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը

41. Խտրականության արգելքը

42. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

43. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

44. Բնակարանի անձեռնմխելիությունը

45. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը

46. Անձնական տվյալների պաշտպանությունը

47. Ամուսնանալու ազատությունը

48. Ծնողների իրավունքները և պարտականությունները

49. Երեխայի իրավունքները

50. Կրթության իրավունքը

51. Մարդու ազատ գործելու իրավունքը

52. Ազատ տեղաշարժվելու իրավունքը

53. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

54. Կարծիքի արտահայտման ազատությունը

55. Ստեղծագործության ազատությունը

56. Հավաքների ազատությունը

57. Միավորումների ազատությունը

58. Կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը

59. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքը
60. Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը
61. Հանրային ծառայության անցնելու իրավունքը
62. Պատշաճ վարչարարության իրավունքը
63. Տեղեկություններ ստանալու իրավունքը
64. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը
65. Հանրագիր ներկայացնելու իրավունքը
66. Քաղաքական ապաստանի իրավունքը
67. Արտաքսման կամ հանձնման արգելքը
68. Ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը
69. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները
70. Գործադուլի իրավունքը
71. Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը
72. Սեփականության իրավունքը
73. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը
74. Վնասի հատուցման իրավունքը
75. Արդար դատաքննության իրավունքը
76. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը
77. Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը
78. Անմեղության կանխավարկածը
79. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը
80. Կրկին դատվելու արգելքը
81. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը
82. Ներման խնդրանքի իրավունքը
83. Մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը
84. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը
85. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

86. Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ

87. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը

88. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ

89. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը

90. Համաչափության սկզբունքը

91. Որոշակիության սկզբունքը

92. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

93. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական

պրակտիկան

94. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական

երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները

95. Աշխատանքային պայմանները

96. Սոցիալական ապահովությունը

97. Արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը

98. Առողջության պահպանությունը

99. Պետության քաղաքականության հիմնական նպատակները և դրանց իրագործումը

100. Կառավարման ձևի հասկացությունը և տեսակները, ՀՀ պետական կառավարման ձևը

101. ՀՀ տարածքը և ՀՀ տարածքային կառուցվածքը

102. Ընտրական համակարգը

103. Ընտրությունների նախապատրաստումը

104. Ընտրական հանձնաժողովները

105. Նախընտրական քարոզչությունը

106. Քվեարկության կազմակերպումը և անցկացումը

107. Ընտրությունների արդյունքների ամփոփումը

108. Նախագահի ընտրությունը

109. Նախագահի լիազորությունները
110. Նախագահի լիազորությունների դադարումը
111. Ազգային ժողովի կազմավորման կարգը և կառուցվածքը
112. Ազգային ժողովի լիազորությունները
113. Ազգային ժողովի պատգամավորը
114. Ազգային ժողովի հանձնաժողովները
115. Ազգային ժողովի նիստերը և նստաշրջանները
116. Ազգային ժողովում օրենքների և որոշումների ընդունման կարգը
117. Կառավարության կառուցվածքը և կազմավորման կարգը
118. Կառավարության և կառավարության անդամների լիազորությունները
119. Կառավարության գործունեության կարգը
120. Տարածքային կառավարման մարմինները և դրանց լիազորությունները
121. Դատարանները և դատավորի կարգավիճակը
122. Դատավորների նշանակման կարգը
123. Դատավորների լիազորությունների դադարման կարգը
124. Սահմանադրական դատարանը, կազմավորման կարգը և ակտերը
125. Սահմանադրական դատարանի լիազորությունները
126. Սահմանադրական դատարան դիմելը
127. Բարձրագույն դատական խորհուրդը, կազմավորման կարգը
128. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները
129. Դատախազությունը
130. Մարդու իրավունքների պաշտպանը
131. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը
132. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը
133. Կենտրոնական բանկը
134. Հաշվեքննիչ պալատը
135. Տեղական ինքնակառավարումը
136. Սահմանադրության ընդունումը և փոփոխումը
137. Հանրաքվեն

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: